ARMENIAN NATIONAL PLATFORM
EASTERN PARTNERSHIP CIVIL SOCIETY FORUM

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՒՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ

ՔՀՖ ենթադրամաշնորհների շրջանակներում ֆինանսավորվող ծրագիր

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ-ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի անվանումը՝ Հարկադիր աշխատանքի, թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց վիճակագրական տվյալների հետազոտություն

Հեղինակ՝ **Արզուման Հարությունյան,** Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա ՀԿ-ի հիմանդիր

Աշխատանքային խմբի N 5

Հիմնախնդիրը

Ծրագիրն իրենից ներկայացնում է **տվյալների հետազոտություն**, որում զետեղված են հարկադիր աշխատանքի, թրաֆիկինգի կամ շահագործման ենթարկված անձանց տվյալների վերլուծությունը:

Հետազոտությունը լիովին համապատասխանում է ՔՀՖ ՀԱՊ նպատակներին, քանի որ այն ուղղված է մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությանը, պետական քաղաքականության և պաշտպանողական միջոցառումների լավարկմանը, հանրային իրազեկվածության բարձրացմանը և համագործակցության ընդլայնմանը տարբեր շահագրգիռ կողմերի հետ:

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ 2024 թվականի 9 ամիսների ընթացքում Հայաստանի Հայաստանում գրանցվել է 31 հարկադիր աշխատանքի, թրաֆիկինգի կամ շահագործման դեպք: Այս թվերը մտահոգիչ են, հատկապես, որ այս դեպքերը ավելի շատ վերաբերում են ներքին թրաֆիքինգին և տեղափոխվում են ինտերնետ հարթակ: Հայաստանի Հանրապետությունում արդեն գրանցվել են կիբեր թրաֆիկինգի դեպքեր, երբ սոցիալական ցանցերի միջոցով մարդիկ դառնում են շահագործման զոհեր:

Մյուս ակտուալ խնդիրն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում նկատելի է այլ երկրների քաղաքացիների մեծ թվով աշխատանքային միգրացիան, հատկապես՝ Հնդկաստանի Հանրապետությունից: Առանց այն էլ գործազրկության մեծ ցուցանիշ ունեցող Հայաստանում, որտեղ բավականին մեծ են նաև սոցիալական և

տնտեսական խնդիրները, ակնհայտ է, որ միգրանտները բախվելու են լուրջ մարտահրավերների՝ ընդհուպ մինչև մարդու իրավունքների խախտումների ու շահագործման փորձերի հետ: Արդեն գրանցվել են դեպքեր, երբ որոշ անբարեխիղճ գործատուներ իրենց աշխատանքներում ներգրավում են միգրանտների առանց աշխատանքային պայմանագրերի և աշխատանքի անվտանգության պայմանների պահպանման: Որպես հետևանք դրանք կարող են բերել այդ անձանց շահագործման:

Այս մարտահրավերները պահանջում են, որպեսզի հասարակությունը և իշխանությունը հասկանան և փորձեն համապատասխան քայլեր ձեռնարկել իրավիճակի կարգավորման և հանրային ինքնագիտակցության բարձրացման ուղղությամբ: Ավելին՝ այսօր աշխատանքային միգրանտների հավաքագրումը տեղափոխվել ինտերնետ տիրույթի այսպես կոչված Dark Web, որը իրավապահների հսկողությունից լրիվ դուրս է: Փաստորեն հանցագործների ձեռքին հայտնվել մի գործիք, որով նրանք հեշտությամբ կարող են գտնել զոհերին, առաջարկելով «շահավետ» աշխատանք, որն իրականում կարող է հանգեցնել հարկադիր աշխատանքի, թրաֆիքինգի կամ շահագործման:

Այս իրավիճակը պահանջում է համակարգված մոտեցում, վիճակագրության ուսումնասիրություն, որը կտանի դեպի հարկադիր աշխատանքի, թրաֆիկինգի և շահագործման դեմ պայքարի արդյունավետ մեթոդների մշակման: Վիճակագրական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, ինչպես նաև առաջարկների մշակումը կդառնան հիմնարար քայլեր՝ համակարգված և արդյունավետ գործողությունների իրականացման համար:

Հետազոտության նպատակը

Հետազոտությունը նպատակ ունի համակարգել տարբեր կառույցների կողմից ներկայացված վիճակագրական տվյալների և հարցազրույցների միջոցով ձեռք բերված ինֆորմացիայի վերլուծության միջոցով մշակել առաջարկներ հարկադիր աշխատանքի, թրաֆիքինգի կամ շահագործման կանխարգելման և մարդկանց հիմնարար իրավունքների պահպանման համար:

Հետազոտության մեջ ներառված կառույցներ և տվյալներ

Հետազոտության մեջ ներառված են հետևյալ կառույցները և նրանց կողմից հրապարակված տվյալները:

- **ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն**

  (Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի վիճակագրություն՝ 2021-2023թթ.)

- **ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին**

  (ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տարեկան հաշվետվություններ՝ 2021-2023թթ.)

- **ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիա**

(ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիայի տարեկան հաշվետվություններ՝ 2021-2023թթ.)

- **Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա ՀԿ**

  (Թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ իրականացված հարցազրույցների վերլուծություն՝ 2022թ.)

Խնդիրները

Հետազոտության հիմնական խնդիրներն են՝

1. Ներկայացնել Հայաստանում հարկադիր աշխատանքի, մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց վերաբերյալ վիճակագրությունը,
2. Իրականացնել համեմատական վերլուծություն ներկայացված տվյալների հնարավոր շեղումները պարզելու համար,
3. Նախանշել այն պատճառները, որոնց հետևանքով մարդիկ ենթարկվում են հարկադիր աշխատանքի, թրաֆիքինգի կամ շահագործման,
4. Մշակել հիմնավորված առաջարկներ, որոնք ուղղված կլինեն հարկադիր աշխատանքի, թրաֆիկինգի կամ շահագործման կանխարգելմանը և հաղթահարմանը,
5. Մշակել առաջարկներ թիրախավորված հանրային իրազեկում իրականացնելու համար:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Վիճակագրական տվյալների վերլուծություն

2021-2023 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքնգի կամ շահագործման նույնացված անձանց վերաբերյալ տեղեկատվություն

Տարեթիվ / Ցուցիչ	**2021**		**2022**		**2023**	
	Արական սեռի	**Իգական սեռի**	**Արական սեռի**	**Իգական սեռի**	**Արական սեռի**	**Իգական սեռի**
Ընդհամենը	**31**		**6**		**25**	
	6	**25**	**2**	**4**	**12**	**13**
Հատուկ կատեգորիայի զոհ, այդ թվում *	6				9	
Երեխա	8		1		6	

	տ/բ**	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ	0		0		3	
	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ
Սեռական շահագործում	24		4		18	
	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ
Աշխատանքային շահագործում	7		2		7	
	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ	տ/բ

Ըստ ՀՀ մարզերի և արտերկրների

Մարզ	2021	2022	2023
Ընդամենը	**31**	**6**	**25**
Արագածոտն			
Արարատ	1		
Արմավիր	2		1
Գեղարքունիք	1		5
Լոռի	5		
Կոտայք	3		7
Շիրակ	1	1	
Սյունիք	2		
Վայոց ձոր	2		4
Տավուշ			
Երևան	14	5	6
Ռուսաստանի դաշնություն			2

Ծանոթություն՝

*** Հատուկ կատեգորիայի զոհ -** մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված անձ, որը հայտնաբերման պահին եղել է երեխա կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձ և այդպիսին է ճանաչվել Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովի որոշմամբ.

**** տ/բ** – տվյալների բացակայություն

2023թ.-ին իրականացված մոնիտորինգի եզրակացությունների մեջ նշված է, որ վիճակագրական տվյալները լիարժեք պատկեր չեն տալիս թրաֆիքնգի կամ շահագործման ենթարկված անձանց մասին, ուստի ՀՀ վիճակագրական կոմիտեի հետ համատեղ 2024թ.-ի համար մշակվել տվյալների հավաքագրման նոր ցուցանիշներ, որոնք հնարավորություն են տալիս ավելի արդյունավետ կազմակերպել կանխարգելման աշխատանքները:

2024 թվականի 9 ամիսների ընթացքում մարդկանց թրաֆիքնգի կամ շահագործման նույնացված անձանց վերաբերյալ տեղեկատվություն

Ընդհանուր	**18 անձ**
Արական	**9 անձ**
Իգական	**9 անձ**
Հատուկ կատեգորիայի զոհ	**8 անձ**
Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձ	**1 անձ**
	0 արական սեռի անձ
	1 իգական սեռի անձ
Երեխա	**7 անձ**
	3 արական սեռի երեխա
	3 իգական սեռի երեխա
Երեխաների սեռական շահագործում	**3 արական սեռի երեխա**
	2 իգական սեռի երեխա
Երեխաների աշխատանքային շահագործում	**1 արական սեռի երեխա**
	1 իգական սեռի երեխա
Սեռական շահագործում	**7 անձ**

Աշխատանքային շահագործում	11 անձ

Սեռ	Տարիք	Կատեգորիա	Շահագործման տեսակ	Շահագործման վայր
Իգական	35		սեռական	Երևան
Իգական	33		սեռական	Երևան
Իգական	37	հատուկ	աշխատանքային	Կոտայքի մարզ
Իգական	66		աշխատանքային	Լոռու մարզ
Իգական	11	հատուկ	աշխատանքային	Տավուշի մարզ
Իգական	1 տ., 7 ամսական	հատուկ	սեռական	Կոտայքի մարզ
Իգական	տարիքային տվյալը բացակայում է		աշխատանքային	Կոտայքի մարզ
Իգական	51		աշխատանքային	Լոռու մարզ
Իգական	12	հատուկ	սեռական	Երևան
Արական	1 տ., 7 ամսական	հատուկ	սեռական	Կոտայքի մարզ
Արական	5	հատուկ	սեռական	Կոտայքի մարզ
Արական	56		աշխատանքային	Կոտայքի մարզ
Արական	39		աշխատանքային	Կոտայքի մարզ
Արական	67		աշխատանքային	Կոտայքի մարզ
Արական	տարիքային տվյալը բացակայում է		աշխատանքային	Կոտայքի մարզ
Արական	10	հատուկ	սեռական	Երևան

Եզրահանգումներ

Հետազոտված տարիների համեմատական քանակական վերլուծությունները ցույց են տալիս, որ տարեց տարի ավելանում են դեպքերի բացահայտումները, որոնք պայմանավորված են՝

- Իրավապահ համակարգի, սոցիալական աշխատողների, աշխատանքի տեսուչների աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ,
- Ոլորտում աշխատող մասնագետների նպատակային դասընթացների կազմակերպմամբ,
- Միջազգային կազմակերպությունների զեկույցներում թերությունների հատկանշմամբ,
- Հանրային իրազեկման արդյունավետ և թիրախավորված իրականացմամբ,
- Հանրության կողմից իրավագիտակցության և ինքնանույնացման կարողությունների զարգացմամբ,
- Ինտերնետ միջավայրից օգտվելու կարողությունների զարգացմամբ,
- Հանրային անհանդուրժողականության նվազեցմամբ,
- Մադիա դաշտի կարողությունների զարգացմամբ:

Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին

Դեռևս տվյալներ չկան

ՀՀ արհմիությունների կոնֆեդերացիա

Դեռևս տվյալներ չկան

«Աուդիո-Վիզուալ լրագրողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն

Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված զոհերի հետ հարցազրույցների վերլուծություն

Թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ հարցազրույցների անցկացման նպատակն է եղել հավաքագրել տվյալներ և տեղեկություն թրաֆիքինգի ենթարկված անձանց տրամադրվող սոցիալական պաշտպանության, աջակցության միջոցների հասանելիության, աջակցություն տրամադրող կառույցների կամ անձանց վերաբերմունքի ու դիրքորոշման մասին, իրականացնել հավաքագրված տվյալների ուսումնասիրություն և վերլուծություն, ինչպես նաև գրանցել քրեական վարույթի ընթացքում զոհակենտրոն մոտեցման առկայությունն ու գործնական կիրառումը, երկրորդային զոհականացման բացառումը:

Թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ հարցազրույց իրականացնելու համար մշակվել է համապատասխան հարցաշար, որով և իրականացվել է հարցազրույցը:

Հարցազրույցների վերլուծության արդյունքները հետևյալն են.

Հարցվածներից 3 անձ եղել է 31-45 տարեկան, 2-ը՝ 19-31, իսկ մեկը՝ 46-60:

Թրաֆիքինգի ենթարկվելու պահին հարցվածներից 1-ն եղել է 28 տարեկան, 1-ը՝ 22, 1-ը՝ 33, 1-ը՝ 25, 1-ը՝ 10 տարեկան անչափահաս, իսկ արական սեռի ներկայացուցիչն եղել է 48 տարեկան:

Նրանցից 5 հոգի եղել են իգական սեռի և մեկը՝ արական սեռի ներկայացուցիչ:

Բոլորը ՀՀ քաղաքացիներ են՝ Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի մարզերից և Երևան քաղաքից: Միջնակարգ և միջին մասնագիտական կրթությամբ անհատներ են, իսկ մեկ անձ, ով վերապրել է իր հետ կատարվածը, այժմ ստանում է բարձրագույն կրթություն:

Հարցվածներից 4-ը թրաֆիքինգի զոհերին և հավանական զոհերին տրամադրվող պաշտպանության և աջակցության ծրագրերի մասին տեղեկացել են ոստիկանությունից, իսկ մեկն ընդհանրապես տեղյակ չի եղել այդ ծառայություններից. նրան այդ մասին պետք է իրազեկեր տվյալ դեպքով մինչդատական վարույթ իրականացնող պաշտոնյան՝ քննիչը, որը և բացահայտել էր տվյալ դեպքը:

Աջակցության ծրագրերի մասին բոլորը տեղեկացել են թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկվելուց հետո՝ քրեական գործի շրջանակներում տուժող ճանաչվելուց հետո, իսկ 1-ը նույնիսկ նույնացումից հետո չի տեղեկացվել: Նրանք

բոլորը դիմել են ծառայություններ ստանալու համար: 5 անձի դիմումներն եղել են միջնորդավորված (հիմնականում հասարակական կազմակերպության օգնությամբ, որը և ստանձնել է աշխատանքը թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ, իսկ մեկ անձ, ով եղել է մանկատան սան, դիմել է աջակցության մանկատան տնօրենի միջոցով), իսկ 1-ը՝ անձամբ: Հարցվածներից 1-ը հարցման իրականացման պահին նոր է նույնացվել որպես մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհ և դեռևս հասանելի ծառայություններից չէր օգտվել:

Զոհերի և հատուկ կատեգորիայի զոհերի աջակցության տեսակներից հարցվածները հիմնականում օգտվել են ապաստարանի, բնաիրային օգնության, բժշկական օգնության և սպասարկման, հոգեբանական օգնության, խորհրդատվական օգնության, իրավաբանական օգնության (անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրում կամ վերականգնում), կրթության հասանելիության ապահովման, միանվագ դրամական փոխհատուցման ծառայություններից:

Ապաստարանից օգտվել են 5 հարցված, որոնց ապաստարան տեղավորումը կազմակերպվել է ապաստարան տրամադրող հասարակական կազմակերպության աշխատակցի և ոստիկանության ծառայողի միջոցով: Հարցվածները ապաստարանում գտնվել են տարբեր տևողությամբ՝ 1-4 տարի՝ ելնելով յուրաքանչյուրի կարիքներից: Ապաստարանում բոլորն ունեցել են ապաստարանից դուրս տեղաշարժի կամ կապի միջոցների օգտագործման սահմանափակումներ:

Հարցվածներից 5-ը նշում են այս սահմանափակումների մասին որպես խնդիր, սակայն միևնույն ժամանակ հասկանում են ապաստարանում մնացող այլ անձանց անվտանգության և ապաստարանի տեղի գաղտնիության պահպանման կարևորությունից բխող սահմանափակումը: Բոլորի ընտանիքների անդամները կամ շրջապատի մարդիկ տեղեկացել են զոհերին տրամադրվող աջակցության մասին, մեկ անձ նշել է, որ բժշկական հաստատությունը խախտել բժշկական գաղտնիքի պահպանման վերաբերյալ կարգը տվյալ դեպքի մասով՝ բացահայտելով վերջինիս՝ թրաֆիքինգի ենթարկված անձ լինելու հանգամանքը:

Ապաստարան մուտք գործելուց հետո բոլորի հետ կազմվել է պաշտպանության, օժանդակության տրամադրման և վերականգնման անհատական ծրագիր: Ապաստարանի առօրյան և տրամադրված ծառայությունները հիմնականում եղել են սննդի տրամադրումը, ուսուցման կազմակերպումը, հոգեբանի, բժշկի և/կամ անհրաժեշտ այլ մասնագետների հետ հանդիպման կազմակերպումը, մասնագիտական հմտությունների ձեռքբերումը (նկարչությունը, ասեղնագործությունը): Նրանցից գրեթե բոլորը գերազանց են գնահատում ապաստարանի կողմից մատուցված ծառայությունները և որևէ հիմնական խնդիր չեն նշում:

Առանձնացված խնդիրներն ապաստարանից դուրս տեղաշարժի և կապի միջոցներից օգտվելու սահմանափակումներն են: Ապաստարանի անձնակազմի կողմից վերաբերմունքը նշվում է ապրումակցող, աջակցող, բոլոր հարցերը աշխատակազմը քննարկել է շահառուների հետ, և նրանք ծառայությունների տրամադրման մեջ որևէ բան չեն ուզում փոխել: Ընդհանուր առմամբ հարցվածները նշում են, որ աջակցության ծրագիրն ամբողջությամբ փոխել է իրենց կյանքը և հնարավորություն ստեղծել հասարակությունում վերաինտեգրվել:

Հարցվածներն ապաստարանից դուրս գալուց հետո հիմնական խնդիր են առանձնացնում բնակարանավորման բացակայությունը, ինչպես նաև անվճար բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորության բացակայությունը և/կամ անմատչելիությունը, քանի որ նրանք ունեցել են առողջապահական ծառայություններից օգտվելու կարիք:

Հարցվածները նշում են, որ թրաֆիքինգի ենթարկված անձանց խորհուրդ են տալիս դիմել աջակցության և պաշտպանության այս ծրագրերին, և որ այդ ծառայությունները հասանելի են, բայց զոհերից քչերը գիտեն դրանց մասին:

Ոստիկանության ծառայողների դերը գնահատում են բավարար, նշում են, որ վերջիններս առաջինն են արձագանքել և հայտնաբերել դեպքը, սակայն տեղում իրենց չեն ներկայացրել առկա աջակցության միջոցները, այլ հրավիրել են ոլորտային ծառայություններ իրականացնող ՀԿ, որի միջոցով էլ տեղեկացվել են հասանելի ծառայությունների մասին:

Հարցազրույցի մասնակիցներից 5-ի դեպքի առնչությամբ հարուցվել են քրեական գործեր, իսկ մեկի առնչությամբ քրեական գործ չի հարուցվել, բացի այդ հարցվածը նշել է, որ ինքն էլ չի ցանկացել քրեական գործ հարուցել: Վարույթի շրջանակներում կատարված քննչական գործողությունների և դրանց իրականացման ընթացակարգի վերաբերյալ հարցվածներից 4-ը նշել են, որ իրենց ներգրավվածությամբ իրականցված քննչական գործողություններն իրենց համար եղել են ոչ ամբողջությամբ հասկանալի, իսկ երկուսի համար՝ լիովին հասկանալի:

Քրեական վարույթի շրջանակներում սոցիալական աջակցության և քննչական մարմինների միջև համագործակցության առկայության մասին հարցվածներից ոչ մեկը տեղյակ չի եղել:

Հարցվածներից 5-ն իրենց համաձայնությամբ օգտվել են աջակցող հասարակական կազմակերպության կողմից տրամադրվող իրավաբանական աջակցությունից՝ գնահատելով դրանք արդյունավետ:

Մինչդատական վարույթի տևողությունը 1 հարցվածի դեպքում եղել է մինչև կես տարի, 3 հարցվածի դեպքում՝ կես տարուց մինչև մեկ տարի, և 1-ի դեպքում մեկ տարուց ավելի և գտնվում է ընթացքի մեջ, քանի որ նա դեռևս չի ճանաչվել որպես տուժող:

Դատական քննությունը 1 հարցվածի դեպքում տևել է մինչև կես տարի, 1 հարցվածի դեպքում մեկ տարուց երկու տարի, 1-ի՝ դեպքում գերազանցել է 2 տարին, իսկ 1 հարցվածի մասով դատական քննությունն ընթացքի մեջ է:

Դատական քննությանը հարցվածների մասնակցությունն ապահովվել է աջակցություն տրամադրող հասարակական կազմակերպության միջոցով: Դատական քննության ընթացքն եղել է հասկանալի և ըստ նախատեսված կարգի: Հարցվածներից ոչ մեկն անտեղյակության պատճառով դատական կարգով չի դիմել վնասների փոխհատուցման համար, ուստի և վնասի փոխհատուցում չեն ստացել: Հարցվածներից 2-ի գործի առնչությամբ է եղել դատավճռի բողոքարկում, որոնք թողնվել են անփոփոխ, որոնցից մեկի հիմքն եղել է ամբաստանյալի խնամքին երեք անչափահասի առկայությունը, որոնցից մեկն եղել է հաշմանդամություն ունեցող անձ:

Դատական քննության ավարտից հետո հարցվածներից 3-ը շարունակել են օգտվել որոշ աջակցության ծառայություններից:

Որևէ բացթողում աջակցող կազմակերպության աշխատանքում իրավաբանական աջակցության տրամադրման փուլում և/կամ հավելյալ աջակցության ծառայության կարիք մինչդատական և դատական քննության ընթացքում չի նշվել:

Հարցազրույցների վերլուծության արդյունքում դուրս բերված խնդիրներն ու առաջարկությունները

Խնդիրներ

Թրաֆիքինգի ենթարկված անձանց վերաբերյալ քրեական վարույթներով մինչդատական և դատական քննության ընթացքում զոհակենտրոն քննության և մոտեցման, ինչպես նաև տրավմաների տեղեկացվածության մասնավորապես՝ տարիքի, մտավոր զարգացվածության աստիճանի ու սեռի առանձնահատկություններով պայմանավորված առանձնահատուկ ընթացակարգերի բացակայություն:

Թրաֆիքինգի ենթարկված անձանց վերաբերյալ քրեական վարույթներով մինչդատական և դատական քննության ժամկետների սահմանափակումների մասով ողջամտության սկզբունքի առավել ապահովմանն ուղղված գործուն կառուցակարգերի բացակայություն:

Սոցիալական աջակցության և քննչական մարմինների միջև մարդկանց թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքների իրացումն երաշխավորող համագործակցության և հետագա աշխատանքների համակարգման ոչ գործուն և անարդյունավետ մեխանիզմների առկայություն:

Թրաֆիքինգի ենթարկված անձանց փաստաթղթավորման, դրանց վերականգնման համար պարտադիր պայման հանդիսացող հաշվառման փաստի բացակայությունը՝ որպես իրավական արգելք:

Թրաֆիքինգի ենթարկված անձանց համար բնակարանավորման ծրագրերում ներգրավվածության բացակայություն, ինչպես նաև գործնականում բժշկական ծառայությունների անմատչելիություն:

Պետության կողմից տրամադրվող աջակցության ծառայությունների վերաբերյալ թրաֆիքինգի ենթարկված անձանց տեղեկացվածության ցածր մակարդակ:

Եզրահանգումներ

Հարցազրույցների բովանդակային վերլուծությունները ցույց են տալիս, որ թրֆիքինգի զոհերի հետ աշխատելիս նկատելի են հետևյալ թերացումները՝

- Իրավապահ համակարգի, սոցիալական աշխատողների, աշխատանքի տեսուչների աշխատանքի արդյունավետության ցածր է:
- Ոլորտում աշխատող մասնագետները պարբերաբար և նպատակային դասընթացներ չեն անցնում:
- Հանրային իրազեկման աշխատանքների արդյունավետությունը ցածր է: Թիրախավորված չեն իրազեկումները: Բացակայում են երկարատև արշավները:

- Հանրության իրավագիտակցությունը և ինքնանույնացման կարողությունները ցածր են,
- Ինտերնետ միջավայրից գրագետ օգտվելու կարողությունները բավարար չեն:
- Շարունակվում է հանրության կողմից անհանդուրժողականության դրսևորման դեպքերը, որը կրկնազոհացման պատճառ է դառնում:
- Մադիա դաշտի ներկայացուցիչների կողմից քիչ չեն անձնական տվյալների բացահայտման, իրավական և լրագրողական էթիկայի կանոնների խախտման դեպքերը:

Վերլուծության արդյունքում դուրս բերված առաջարկություններ՝

Առաջարկություններ թրաֆիքինգի ենթարկված անձանցից՝

- Իրավապահ համակարգի աշխատակիցների մոտ թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ աշխատանքում զգայունության բարձրացում,
- իրավապահ համակարգ մուտք գործելուն պես թրաֆիքինգի հավանական/պոտենցիալ զոհերին հոգեբանական ծառայության տրամադրում,
- առերեսման ժամանակ բաժանարար ապակու ապահովում,
- նախաքննական գործընթացի հասանելի, մատչելի լեզվով ներկայացում, այդ թվում նաև դեպքի որակման համար նախատեսված հոդվածի և սանկցիայի վերաբերյալ առավել մատչելի իրազեկում,
- գործի առավել արագ քննության իրականացում,
- իրազեկման աշխատանքների իրականացում: Ըստ հարցվողների՝ հանրությունը բավարար տեղեկացված չէ թրաֆիքինգ երևույթի և առկա աջակցության միջոցների մասին: Հարցվածներն անհրաժեշտություն են տեսնում լայնածավալ իրազեկման արշավների իրականացման ինչպես սոցիալական ցանցերում (ֆեյսբուք, Ինստագրամ, Տիկ-Տոկ) այնպես էլ հեռուստատեսության, վերելակների և շենքերի մուտքերի տեղեկատվական կենտրոնների միջոցներով: Հարցվածներից մեկը կարևորեց նաև խնդրի իրազեկման գործընթացը սկսել դպրոցներից,ա
- ապաստարանից դուրս գալու համար անձանց համար կարևորագույն խնդիր է լինում կեցության հարցը: Այս խնդիրը դեռևս առկա է,
- բժշկական և բնաիրային աջակցության տրամադրման շարունակականություն՝ ապաստարանից դուրս գալուց հետո:

Առաջարկություններ հետազոտության վերլուծության արդյունքում

- Բարձրացնել իրավապահ համակարգի, սոցիալական աշխատողների, աշխատանքի տեսուչների աշխատանքի արդյունավետությունը՝ պարբերաբար իրականացվող մասնագիտական և թիրախավորված վերապատրաստումների միջոցով:
- Բարձրացնել հանրային իրազեկման աշխատանքների արդյունավետությունը պարբերաբար կազմակերպվող թիրախավորված մեդիա արշավների միջոցով:
- Բարձրացնել հանրության իրավագիտակցությունը և ինքնանույնացման կարողությունները սոցիալական գովազդների և սոցիալական ծրագրերի միջոցով:

- Բարձրացնել հատկապես երիտասարդների ինտերնետ միջավայրից գրագետ օգտվելու կարողությունները դասընթացների և սոցիալական գովազդների միջոցով:
- Մշակել ազգային ծրագիր հանրության անհանդուրժողականության դրսևորման վեկտորի ուժեղացման ուղղությամբ:
- Կազմակերպել դասընթացնել մեդիա դաշտի ներկայացուցիչների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ: Ձևավորել և վերապատրաստել մասնագիտացված լրագրողների համայնք:
- Առաջարկել կառավարությանը խստացնել օտարերկրյա աշխատանքային միգրանտների մուտքը Հայաստանի Հանրապետություն:
- Վերանայել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տեսուչների լիազորությունները ստուգումներ իրականացնելիս:

Եզրափակում

Հետազոտությունը հնարավորություն տվեց վեր հանել տարեց տարի հարկադիր աշխատանքի, թրաֆիկինգի կամ շահագործման ենթարկված անձանց թվաքանակի ավելացման խնդիրները, կարիքները: Վիճակագրական տվյալների վերլուծությունը հնարավորություն տվեց մշակելու հիմնավորված առաջարկներ, որոնք ուղղված են հարկադիր աշխատանքի, թրաֆիկինգի կամ շահագործման կանխարգելմանը և հաղթահարմանը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ռազմավարություն, քաղաքականություն մշակելու, ինչպես նաև դասընթացների և վերապատրաստումների ժամանակ:

Հետազոտությունը համապատասխանում է նաև 5-րդ աշխատանքային խմբի առաջնային հարցերին, որոնք ընդգրկում են աշխատողների իրավունքների պաշտպանությունը, սոցիալական երկխոսությանը և սոցիալական արդարությունը:

Քանի որ նմանանատիպ հետազոտություն Հայաստանի Հանրապետությունում մինչ այժմ չէր իրականացվել, ուստի այն կարող է ծառայել նաև որպես կանխարգելման մեխանիզմների մշակման ցուցիչներ մարդկանց հարկադիր աշխատանքի, թրաֆիքնգի կամ շահագործման դեմ պայքարի ծրագրեր մշակելիս:

Ծրագրի իրականացման արդյունքում մշակված առաջարկությունների իրագործման համար անհրաժեշտ է ապահովել համագործակցություն բոլոր շահագրգիռ կառույցների միջև: Այն կարևոր քայլ է հարկադիր աշխատանքի, թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված անձանց վիճակագրական տվյալների վերլուծության հիման վրա մշակված առաջարկությունների իրագործում մոտ ապագայում, մինչ Հայաստանի հանրապետությունը պատրաստվում է դառնալ Եվրամիության անդամ: